

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/14**

« 26 » « 11 » 2019թ.

ք. Երևան

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայությանն կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Ֆլեշ Մոտորս» ՍՊ Ընկերությունը ի դեմս տնօրեն Ա.Լալայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ «Կատարող»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3480000 (երեք միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $49=59/89 \times 50 \times \text{Ք}$, որտեղ՝

49-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

59-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 35000000 (երեսունհինգ միլիոն) ՀՀ դրամ,

89-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 52539660 (հիսուներկու միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամ,

5-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է՝ հանաձայն Պայմանագրի հավելված N1-ի, Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար

առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 31 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն

ք. Երևան, Արշակունյաց-63

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Կ 900011175016

ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Ա. Ղազարյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ

ք. Երևան, Ռուբինյանց փ. 31

«Արարատբանկ» ԲԲԸ

Հ/Կ 1510012745550100

ՀՎՀՀ 00873228

Ֆլեշ Մոտորս ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա. Լալայան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության		Նախատեսված		Նախատեսված		Նախատեսված		Նախատեսված				
հրավերի նախատեսված սված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ծառայության գնացուցակը՝ առավելագույն գինը, ըստ տրանսպորտային միջոցների մակնիշների (տեսակների)	ՎԱԶ, ՎԱԶ, ՌՈՒԱԶ մակն. ա/մ	«Սադկո» մակնիշի բեռն. և «ՊԱԶ» մակնիշի ավտոբ.	5 և ավել տեղ. մարդ. ա/մ	Այլ պետությունների արտադրության տրանսպորտային միջոցներ	ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակ	հասցեն	ժամկետը**
1	5011130/2	h/h	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղիների և այլ օժանդակ նյութերի անվանումները					ՀՀ դրամ	3480000	1	Ք.Երևան	2019 թ., սակայն ոչ ուշ քան 25.12.2019 թ.
			SU-1 ներառվող ծառայությունների անվանում									
		1	Բռնկման համակարգի ստուգում	5000	5000	5000	5000	5000				
		2	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000	5000				
		3	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000	5000				
		4	Սարեցման համակարգի ստուգում	5000	5000	5000	5000	5000				
		5	Համակարգչային պատրուշում	5000	5000	5000	5000	5000				
		6	Յուղման համակարգի ստուգում	5000	5000	5000	5000	5000				
		7	Արտաձման համակարգի ստուգում	5000	5000	5000	5000	5000				
		8	Կցորդման համակարգի ստուգում	5000	5000	5000	5000	5000				

9	ՓՏ աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000
10	ԱՓՏ աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000
11	Կարրանային փոխանցման աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000
12	Փաշխիչ տուսի աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000
13	Առջևի և հետևի կամօջակների աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000
14	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000
15	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000
16	ABS համակարգի ստուգում	5000	5000	5000	5000
17	Թափքի վիճակի ստուգում	5000	5000	5000	5000
18	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	5000	5000	5000	5000
1. Շարժիչ					
19	Շարժիչի մասնակի ստուգում	10000	10000	10000	10000
20	Շարժիչի հանում և տեղադրում	50000	60000	70000	70000
21	Շարժիչի հանում և տեղադրում կոնդիցիոների առկայության դեպքում	50000	60000	70000	70000
22	Շարժիչի հանում և տեղադրում ԱՓՏ դեպքում	50000	60000	70000	70000
23	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում	7000	7000	8000	8000
24	Շարժիչի մասնակի նորոգում	60000	60000	80000	80000
25	Շարժիչի նորոգում	120000	170000	170000	170000
26	Բաշխիչ լիսեռի կապարիչի հանում և տեղադրում	5000	5000	8000	8000
27	Շարժիչի բոկի գլխիկի հանում և տեղադրում	50000	50000	70000	70000
28	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	5000	5000	5000	5000
29	Շարժիչի առջևի կապարիչի հանում և տեղադրում	30000	30000	40000	40000
30	Շարժիչի գլխիկի նորոգում	30000	35000	40000	40000
31	Փակակների խցուկի փոխարինում	1000	1000	1000	1000
32	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	7000	7000	7000	7000
33	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	10000	13000	13000	13000
34	Ատամնավոր փոկի փոխարինում	20000	20000	20000	20000
35	Շարժիչի բոկի հղկում	110000	160000	160000	160000
36	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	13000	13000	13000	13000
37	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում կոնդիցիոների առկայության դեպքում	13000	13000	13000	13000
38	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	30000	40000	40000	40000
39	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում ԱՓՏ դեպքում	30000	40000	40000	40000
40	Կոնդիցիոների գտիչի և փոկի փոխարինում	5000	5000	5000	5000
41	Միտցային օղակների փոխարինում	5000	5000	5000	5000
42	Թափանիկի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000
43	Թափանիկի պասկի փոխարինում	5000	5000	5000	5000

44	Պարապ ընթացքի կարգավորում	5000	5000	5000	5000
45	Օդի ֆիլտրի փոխարինում	3000	3000	3000	3000
46	Գններատորի փոկի փոխարինում	5000	5000	5000	5000
47	Գններատորի փոկի ջգոդ հոլովակի փոխարինում	5000	8000	8000	8000
48	Կափույթի միջադիրի փոխարինում	5000	5000	5000	5000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				
49	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	2000	2000	2000	2000
50	Յուղի պոմպի փոխարինում	20000	20000	20000	20000
51	Ղեկավարման բլոկի նորոգում	10000	10000	10000	10000
52	Բռնկման կարգավորում	10000	10000	10000	10000
53	CO կարգավորում	10000	10000	10000	10000
54	Խարնարակի հանում և տեղադրում	10000	10000	10000	10000
55	Խարնարակի նորոգում	10000	10000	10000	10000
56	Օդի գտիչի փոխարինում	2000	2000	2000	2000
57	Ինժեկտորի ֆորսունյանների հանում և տեղադրում	20000	27000	27000	27000
58	Ինժեկտորի ֆորսունյանների մաքրում	10000	10000	10000	10000
59	Վառելիքի մղիչի կարգավորում	2000	2000	2000	2000
60	Բենզամղիչի փոխարինում	7000	7000	7000	15000
61	Վառելիքի գտիչի փոխարինում	5000	5000	5000	15000
62	Դրոստային փականի լվացում և կարգավորում	10000	10000	10000	10000
63	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	30000	30000	30000	30000
64	Վառելիքի բաքի մղիչի ցանցի մաքրում	3000	3000	3000	3000
65	Վառելիքի բաքի մղիչի ցանցի փոխարինում	3000	3000	3000	3000
66	Յուղի մակարդակի ցուցիչի նորոգում	5000	5000	5000	5000
67	Յուղի մակարդակի ցուցիչի փոխարինում	4000	4000	4000	4000
68	Տրամյրոի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000
69	Տրամյրոի նորոգում	5000	5000	5000	5000
	3. Սառեցման և արտաձման համակարգ				
70	Հովիարի փոկի հանում և տեղադրում	6000	6000	6000	8000
71	Հովիարի հանում և տեղադրում	7000	7000	7000	11000
72	Ռարխատորի հանում և տեղադրում	10000	10000	10000	20000
73	Ռարխատորի հանում և տեղադրում ԱՓՏ դեպքում	10000	10000	10000	20000
74	Ռարխատորի մասնակի նորոգում	20000	20000	20000	30000
75	Հակաառեցուցիչ հեղուկի փոխարինում	4000	4000	4000	4000
76	Սառեցման համակարգի օդահանում	4000	4000	4000	4000
77	Թերմոստատի միջադիրի փոխարինում	6000	6000	6000	10000
78	Թերմոստատի փոխարինում	6000	6000	6000	10000
79	Կոնդիցիոների ռադիատորի հանում և տեղադրում	10000	10000	10000	20000
80	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	10000	10000	10000	20000
81	Ջրի պոմպի հանում և տեղադրում կոնդիցիոների	11000	11000	11000	15000

114	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի նորոգում	13000	13000	13000	13000
115	Կիսասնու առանցքակալի փոխարինում	13000	13000	13000	13000
116	Առջևի կամ հետևի կամրջակի յուղի փոխում	5000	5000	5000	5000
117	Առջևի կամ հետևի կամրջակի յուղի հոսքի վերացում	5000	5000	5000	5000
7. Կախոց					
118	Տրավերսի հանում և տեղադրում	16000	16000	16000	45000
119	Հողակալի հանում և տեղադրում	13000	13000	13000	13000
120	Հողակալի խցովի փոխարինում	13000	13000	13000	13000
121	Հողակալի առանցքակալի փոխարինում	16000	16000	16000	16000
122	Անվակունդի առանցքակալի փոխարինում	13000	13000	13000	13000
123	Անվակունդի շարվալի և հեղույսի փոխարինում /1 անվի համար/	16000	16000	16000	16000
124	Անվակունդի փոխարինում	16000	16000	16000	16000
125	Հողակալի փոշեթիվեցի փոխարինում	8000	8000	8000	8000
126	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	12000	12000	12000	12000
127	Հասանակի հանում և տեղադրում	12000	12000	12000	12000
128	Հասակի հանում և տեղադրում	13000	13000	13000	13000
129	Հասակի վռանների փոխարինում	16000	16000	16000	16000
130	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	12000	12000	12000	12000
131	Հարվածամեղմիչների հանում և տեղադրում	12000	12000	12000	12000
132	Լծակի հանում և տեղադրում	8000	8000	8000	8000
133	Լծակի վռանների փոխարինում	6000	6000	6000	6000
134	Առջևի ձգանի հանում և տեղադրում	4000	4000	4000	4000
135	Միջին ձգանի հանում և տեղադրում	6000	6000	6000	6000
136	Սայլենտ-բոկի սպասարկում	8000	8000	8000	8000
137	Սայլենտ-բոկի փոխարինում	5000	5000	5000	5000
138	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	4000	4000	4000	4000
139	Գնդե հողակալի նորոգում	6000	6000	6000	6000
140	Գնդե հողակալի փոխարինում	8000	8000	8000	8000
141	Ծայրականների հանում և տեղադրում	5000	5000	5000	5000
142	Կայունարարի հանում և տեղադրում	9000	9000	9000	9000
143	Կայունարարի կանգնակի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000
144	Կայունարարի վռանի փոխարինում	5000	5000	5000	5000
145	Անվունազծային լծակի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000
146	Անվունազծային լծակի վռանների փոխարինում	5000	5000	5000	5000
147	Հետևի զսպանակի հանում և տեղադրում	7000	9000	9000	9000
148	Հետևի մետաղածողի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5000	11000	11000	11000
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	6000	6000	6000	6000
151	Անվաբացքի կարգավորում	11000	11000	11000	11000

152	Ընթացքային մասի յուղում	5000	5000	5000	5000
8. Ղեկային մեխանիզմ					
153	Ղեկային ձողի փոխարինում	9000	9000	9000	9000
154	Ղեկային ձողի ծայրակայանների փոխարինում	5000	5000	5000	5000
155	Ղեկային ճոճանակի նորոգման կոնսպեկտի փոխարինում	5000	5000	5000	5000
156	Ղեկային ձգանի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000
157	Ղեկային կայունի հանում և տեղադրում	20000	30000	40000	40000
158	Ղեկային կայունի նորոգում	30000	40000	120000	
159	Ղեկային կայունի առանցքակալի կամ վրանների փոխարինում	2000	2000	2000	2000
160	Ղեկային կայունի հողակալների հանում և տեղադրում	2000	2000	2000	2000
161	ՀՈՒ պլոմպի հանում և տեղադրում	13000	13000	13000	13000
162	ՀՈՒ փուկի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000
163	ՀՈՒ փողրակի հանում և տեղադրում	9000	9000	9000	20000
164	ՀՈՒ փողրակի հանում և տեղադրում կրնոիցիոնների առկայության դեպքում	9000	9000	9000	20000
165	ՀՈՒ ՂԿ հանում և տեղադրում	5000	5000	5000	10000
166	ՀՈՒ ՂԿ նորոգում	5000	5000	5000	10000
9. Արգելակային համակարգ					
167	Գլխավոր գլանի հանում և տեղադրում	11000	11000	11000	11000
168	Գլխավոր գլանի նորոգում	11000	11000	11000	11000
169	Վաակումային ուժեղարարի հանում և տեղադրում	11000	11000	11000	11000
170	Բանվորական գլանի հանում և տեղադրում	11000	11000	11000	11000
171	Բանվորական գլանի նորոգում	11000	11000	11000	11000
172	Արգելակման համակարգի օրհանում	7000	7000	7000	9000
173	Սուպպորտի հանում և տեղադրում	9000	9000	9000	12000
174	Սուպպորտի նորոգում	13000	13000	13000	18000
175	Արգելակային փողրակի փոխարինում	5000	5000	5000	7000
176	Արգելակային կոճղակների փոխարինում	3000	3000	3000	4000
177	Սկավառակային կոճղակների փոխարինում	8000	8000	8000	10000
178	Արգելակային սկավառակի հոկյում	8000	8000	8000	10000
179	Արգելակային սկավառակի փոխարինում	5000	5000	5000	7000
180	Արգելակային սեղնակի հանում և տեղադրում	5000	5000	5000	7000
181	ABS հանում և տեղադրում	13000	13000	13000	13000
182	ABS նորոգում	5000	5000	5000	7000
183	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	9000	9000	9000	11000
184	Ձեռքի արգելակի մեխանիզմի նորոգում	9000	9000	9000	11000
10. Էլեկտրասարքավորում					
185	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	6000	6000	6000	11000

186	Գեներատորի հանում և տեղադրում	8000	8000	8000	21000
187	Գեներատորի հանում և տեղադրում հիդրոուժեղադրարի առկայության դեպքում	8000	8000	8000	21000
188	Գեներատորի նորոգում	15000	15000	15000	20000
189	Մեկնարկիչի հանում և տեղադրում	10000	10000	10000	13000
190	Մեկնարկիչի նորոգում	10000	10000	10000	15000
191	Առցկի լապտերի հանում և տեղադրում	6000	6000	6000	16000
192	Հետևի լապտերի հանում և տեղադրում	6000	6000	6000	8000
193	Լամպերի հանում և տեղադրում	6000	6000	6000	8000
194	Լապտերի կենտրոնական փոխակերպիչի փոխարինում	6000	6000	6000	8000
195	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	8000	8000	8000	12000
196	Սարքերի պանելի հանում և տեղադրում	16000	16000	16000	65000
197	Սարքերի պանելի նորոգում	16000	16000	16000	65000
198	Ձայնային ազդանշանի հանում և տեղադրում	10000	10000	10000	15000
199	Ձայնային ազդանշանի նորոգում	10000	10000	10000	15000
200	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	5000	5000	5000	6000
201	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	20000	20000	20000	22000
202	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	5000	5000	5000	7000
203	Էլ. հաղորդակների մասնակի նորոգում	5000	5000	5000	7000
204	Էլ. հաղորդակների հիմն. խրցի հանում և տեղադրում	52000	52000	52000	65000
205	Էլ. հաղորդակների 2-րդ խրցի հանում և տեղադրում	52000	52000	52000	65000
206	Էլ. տվիչների փոխարինում	8000	8000	8000	10000
207	Էլ. անջատիչների փոխարինում	8000	8000	8000	10000
208	Վառոցքի մոմերի փոխարինում	8000	8000	8000	10000
	11. Այլ ծառայություններ				
209	Սնիվի հանում և տեղադրում	1500	1500	2500	1500
210	Սնվարդի նորոգում	1500	1500	2500	1500
211	Ակտորդի քանդում և հավաքում	1000	1000	1000	1000
212	Սնիվի հավասարակշռում	1500	1500	1500	1500
213	Սնվահեծի վազ	10000	10000	10000	10000
214	Յոդի, ջրի, վառելիքի արտահոսքի վերացում	4000	4000	4000	4000
215	Հողման աշխատանքներ 1սմ ² համար	1500	1500	1500	1500
216	CO գորման աշխատանքներ /գինը 1սմ ² -ի համար/	1500	1500	1500	1500
217	Ավտոմեքենայի թափքի հոկում և ներկում / 1դմ ² համար /	4000	4000	4000	4000
218	Կոնդիցիոների լիցքավորում	27000	100	27000	27000

219	Կոնդիցիոների հանում տեղադրում	8000	100	10000			
220	Կոնդիցիոների նորոգում	15000	100	20000			
221	Դիմապակու հանում և տեղադրում	15000	15000	18000			
222	Խստատային աշխատանքներ 1 ժամի համար	7000	7000	7000			
223	Փականագործական աշխատանքներ 1 ժամի համար	7000	7000	7000			
224	Քարշակի ծառայություն 1կմ-ի համար	1500	1500	1500			
225	Ապակեվացիչի մեխանիզմի հանում և տեղադրում	8000	8000	8000			
226	Դուան ապակու բարձրացման մեխանիզմի նորոգում	6000	6000	6000			
227	Դուան ապակու բարձրացման մեխանիզմի փոխարինում	8000	8000	8000			
228	Դուան ապակու փոխարինում	8000	8000	8000			
229	Կողային հայելիների հանում և տեղադրում	5000	5000	5000			
230	Դուան բռնակի հանում և տեղադրում	5000	5000	5000			
231	Դուան փականի հանում և տեղադրում	6000	6000	6000			
232	Դուան փականի նորոգում	6000	6000	6000			
233	Նստատեղի քանդում և հավաքում	10000	10000	10000			
234	Նստատեղի նորոգում	10000	10000	10000			
235	Համարանիշի ամրակների փոխարինում	10000	10000	10000			
236	Մեքենայի լվացում	4000	15000	4000			
237	Սրահի քիմ. մաքրում	18000	18000	18000			
238	Սրահի օդի զտիչի փոխարինում	2500	2500	2500			
239	Շարժիչի լվացում	10000	10000	10000			
240	Բամպերի հանում և տեղադրում	10000	10000	10000			
241	Բամպերի նորոգում	25000	25000	25000			
	Ընդամենը ծառայություններ	2829800	3009100	3986000			
		ՓԱՀ, ՎԱՀ, ՈՒՎԱՀ մակն. ա/մ	«Սարկո» մականիշի բեռն. և «ՊԱՀ» մականիշի ավտոբ.	5 և ավել տեղ. մարդ. ա/մ			
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	ԱՊՀ արտադրության ավտոմեքենաներ	Այլ պետությունների արտադրության տրանսպորտային միջոցներ				

1. Շարժիչ																				
1	Շարժիչ /կրմայվելս/							300000			480000			600000						
2	Շարժիչի բլոկ /կրմայվելս/							200000			320000			400000						
3	Շարժիչի բլոկ							120000			280000			350000						
4	Շարժիչի գլխիկի կրմայվելս							180000			240000			300000						
5	Շարժիչի գլխիկի միջադիր							4000			20000			25000						
6	Շարժիչի բարձիկ							8000			38400			48000						
7	Շարժիչի նորոգման կրմայվելս							16000			160000			200000						
